

Կ Ա Ր Գ

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(ՏԱՐԱԾՔՆԵՐԻ) ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են հարկային մարմնի կողմից օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններից (այսուհետ՝ հաշվետու պետություններ) ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ստացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում կիրառվող հասկացություններն են՝

1) միասնական հաշվետվողական ստանդարտի և դրա մեկնաբանության (այսուհետ՝ ստանդարտ) ընդարձակ նշագրման լեզվի սխեմա (այսուհետ՝ սխեմա)՝ տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված և ստանդարտացված ընդարձակ նշագրման լեզվի ձևաչափ՝ ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկության ավտոմատ փոխանակման և ստանդարտով փոխանակվող տվյալների վերաբերյալ կառուցվածքային հետադարձ կապ ապահովելու համար.

2) ստանդարտի կարգավիճակի հաղորդագրություն (այսուհետ՝ հաղորդագրություն)՝ հաղորդագրություն, որը թույլ է տալիս հարկային մարմնին հաստատել ստացված պանակների ստացումը կամ մերժումը, ինչպես նաև տեղեկացնել ստացված պանակներում հայտնաբերված ցանկացած սխալի մասին՝ Սխեմայի ձևաչափով հարկային տեղեկատվության ավտոմատ փոխանակման համակարգի միջոցով պանակները ներկայացնելուց հետո.

3) հարկային տեղեկատվության ավտոմատ փոխանակման համակարգ (այսուհետ՝ համակարգ)՝ համակարգ, որը մշակվել է հարկային վարչարարության ֆորումի նախաձեռնությամբ և գործում է Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ ֆորումի շրջանակներում: Համակարգը

օգտագործվում է բոլոր հաշվետու պետությունների կողմից՝ ստանդարտով նախատեսված տեղեկությունները և հարկային այլ տեղեկություններ անվտանգ և ստանդարտացված ձևով հաշվետու պետություններին փոխանցելու նպատակով.

4) պանակ՝ տվյալների կազմակերպման տարր, որը պարունակում է ֆայլեր և ենթապանակներ և օգնում է ֆայլերը դասակարգել, կազմակերպել և հեշտացնել դրանց հասանելիությունը:

3. Հարկային մարմինը, օգտագործելով համաձայնեցված գաղտնագրման մեթոդը, գաղտնագրվածում է հաշվետու պետության կողմից համակարգի միջոցով ստացված պանակը՝ վերջինիս ստացման օրվան հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Պանակի ստացման օրվան հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում համակարգը կատարում է որակի վերահսկում՝ վավերացնելով ֆինանսական հաշիվների համար սխեմայի պարտադիր բոլոր տարրերի և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 443.4-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան սահմանված ձևաչափով լրացված տեղեկությունների առկայությունը:

5. Հարկային մարմինը սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված գործողությունները կատարելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է հաղորդագրություն յուրաքանչյուր հաշվետու պետությանը՝ նշելով, թե արդյոք ֆայլերն ընդունվել կամ մերժվել են՝ մերժման դեպքում նշելով մերժման հիմքերը, ինչպես նաև սխեմայի ֆայլի և դրա գրառումների վավերացման արդյունքները:

Հարկային մարմինը ստանդարտին համապատասխան գաղտնագրված հաղորդագրությունը հաշվետու պետությանը տրամադրում է ոչ ուշ, քան համակարգի միջոցով պանակը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ